

աշալուրջ գործունէութեամբ կարողացել էր մի համեստ դրամապուխ կազմել և կենանութեամբ զործ էր դնում այն իւր չքառոր ազգականներին ուսում տալու վերաբ:

Հանգուցեալի իշխատակը լաւերժացնելու համար նորաթողան, Ներսէս, Սովոչու և Արմենակ եղբալրները նուիրեցին 3000 ռուբլի ի լիշատակ ս. Էջմիածնի 1600 ամեկի, Խակ քեռին պ. Խորայէլ Բէզլարեանցը հետեւալ նուիրաբերութիւններն արեց Տ. Եղիշէ ա. քահ. Գեղամեանցի միջոցով:

1. Շուշուալ հալոց թեմ. զպրոցին 1000 ռուբլի տոկոսով մի որդեգիր պահելու:

2. Շուշուալ ռէալական զպրոցին 1000 ռուբլի նոյն նպատակով՝ հար լուսաւորչական զաւակներից:

3. Թաւրիդի կենդրուական զպրոցին 1000 ռուբլի.

4. Մարդասիրական Ընկերութեան աշխատանքի տան 200 ռուբլի:

5. Շուշուալ Ղազանչեցոց եկեղեցոն 200 ռուբլի:

6. Շուշուալ կուսանաց վանքին 100 ռուբլի:

և 7. Մի հատոր «Դիւան Հալոց պատմութեան» տպագրելու 500 ռուբլի:

### «ՏԱՐԱԶԸ, ԸՆԴԱՐՁԱԿ ԵՐԱԳՐՈՎ»

Պ. Տիգրան Ղազարեանի խմբագրութեամբ լուս տեսնող սՅարաց՝ շաբաթաթերթը ալս տարուասից առանձին փոփոխութեան է ենթարկուել. սկսել է հրատարակուել մեծ դիրքով և ճոխ ու հարուստ բովանդակութեամբ. Բացի դորանից ամեն համարին կցած է լինում սովորական պատկերազարդ առածին ցաւելուածը «Իլլիւստրատիօն» վերնազրով. Մենք, որ հար լրջմիտ մամուլի բարգաւաճման սիրահար ենք, կարող ենք շնորհաւորել Քարազից ալի լառաջւդիմութիւնը:

### ՄՏԱԿՈՐ ՏՁՐՈՒԿԸ

Վերջին քառորդ դարում մեր մէջ երևան եկան մարդիկ, որոնք սիստեմատիքաբար ստի և կեղծի քարոզութեան վարդապետ դարձած թունաւորեցին և թունաւորում են ժողովրդի հոգին, Ալս դեռ մեծ ցա չէր լինի, որովհետև ամեն ազգի մէջ փուչ մարդիկ, ժողովրդի շահերի թշնամի և անգէտ մարդիկ կարող են լինել Բայց ցաւն այն է, որ մեր մէջ ալս տեսակ մարդիկ խօսում են լանուն ազգասիրութեան, լանուն գիտութեան, լանուն ազատամտութեան, և ալսպիսով մալորեցնում միամիտ ժողովրդի միտքը որոշ դիտումներով. Եզուի-

տութիւնը շիտակութեան դիմակի տակ ահազին չարիքներ է հասցրել մեղ և դեռ շարունակում է հասցնել.

Այս տեսակ մարդկանցից մէկն է «լաւտնի» Համբարձում Առաքելեանը:

Սա այն բազմաթիւ ժահրավի բշտիկներից մէկն է, որոնք ալնպիսի առատութեամբ բնում են մի խեղճ աղջի հիւանդ մարմնի վերաս։ Մի փոքրիկ բշտիկ, մի քստմնելի խոց, բալց ամեն տեղ խոթում է իւր քիթը և տղրուկի պէս ծծում է աղջի միամտութիւնը։ Սա ոչ ոսմանիստ է, ոչ հրապարակախօս, ոչ քննադաս, և ոչ հէքիաթաբան։ բալց տեսէք որ ամեն բանի մասին գրում է։

Ուրիշ աղջիրի մէջ սովորութիւն է, որ տարուալ վերջին լրագիրները կամ ամսագիրները գրում են նախընթաց տարուակ կեանքի և գրականութեան տեսութիւն, բալց ալս զրողները պատմում են երկերի համառօտ բովանդակութիւնը, ինչտակում են իրանց կարծիքների գլխաւոր հիմունքները և ապացուցները։ Բալց ինչ որ օտար հրապարակախօսի և գրադէտի համար տարրական ծշմարտութիւն է՝ մեզ համար պարտաւորական չէ։

«Մշակի» երկրորդ համարում պ. Համբարձում Առաքելեանը սավկա ծախող գրագէտի հմտութեամբ գրել է մի «գրական տեսութիւն» (?) վերնագրով «Հայուական» և անունը զրել է դրական լոդուած։ Յօդուածի մէջ չկալ ո՛. մի նշանաւոր գրքի մասին որեւէ տեղեկութիւն, ոչ մի քննութիւն և ոչ մի փաստ, իսկ լոդուածի կիսից աւելին նուիրուած է «Լումար» հանդիսի հայուելուն, Պ. Առաքելեանը «Լուման» անուանում է տէրտէրական թերթ, ասում է թէ «Լումալում» գրում են «մութովեր»։ Բալց ի հարկէ ոչ մի ապացուց և ոչ մի տեղեկութիւն չի բերում իւր հայուանքը զոնէ քողարկելու համար։ Բալց չէ որ առանց ապացուցի խօսողին ժողովուրդը վալրահաջանուն է տալիս, իսկ ալսպիսի լոդուածագրին միմիան չարամիտաստանող անունը կարելի է տալ, որովհետեւ պ. Առաքելեանը չէ ասում, թէ ովքեր են մեր ամութ ովքերը, ինչ թունաւոր սնունդ է տուել «Լուման», որով թունաւորուել է Համբարձում Առաքելեանը։

Իսկ որ մենք քահանաւ ենք և ալս պատճառով մեր թերթը քահանաւական է՝ սորա դէմ մենք ոչինչ չունինք, ալլ ամենալն հպարտութեամբ կարող ենք ասել, որ ալս մենք քահանաւ ենք և հակ դրականութեամբ ենք պարապում և մեր ուղղութիւնը ըստ մեր կոչման պիտի լինի աղջակին գրականութեան բարգաւաճումը և մենք «եարլիկով» չենք դատելու գործիչներին և գրողներին, որովհետեւ մեր դարը զժբաղատաբար շատ է լաւտնի սեարլիկներին կեղծութեամբ։

Դրականապէս պահանջում ենք պ. Առաքելեանից պատասխանել հետեւալ հարցերին. ա, ովքեր են այն վաշխառուները, որոնց մենք գովել ենք. բնը ներկ փաստեր և ապա-

ցոլցներ դոցա վաշխառուութեան, զ, ովքեր են այն մութ՝  
ոլժերը, որոնք մուտք են գործել «Հումալի» մէջ և վերջապէս  
փաստերով ապացուցանել թէ ինչնի են դոքա «մութ ոլժեր».

### ՄԻ ՄԻՋԱԴԵՊԻ ԸՆԻԹՈՎ.

Անցեալ տարի Բագու քաղաքում տեղի ունեցաւ մի մի-  
ջադէպ, որ առիթ տուեց երկար խօսակցութիւնների և լրադ-  
րական օղուածների:

Երդուեալ հաստարմատար պ. Գ. Սնգիրաբեանն երկար  
տարիներ կտուավարում էր Բագուի հարուստներից մէկի պ.  
Մ. Շահդիդանեանի միլիօնավին գործերը Պ. Շահդիդանեանի  
գործերը մինչեւ պ. Սնգիրաբեանի կառավարիչ հրաւիրուելը  
անպիսի խոսն ի խոռու զրութեան մ.ջ է եղել որ ոչ մի  
կառավարիչ չէր կարող նրանց կարգի բերել. Պ. Սնգիրաբեա-  
նի գլխաւոր ջանքն է եղել ազատել պ. Շահդիդանեանին վերջ-  
նական սնանկութիւնից և մի կերպ գոհուցում է տալիս նրա  
պարտատերերին տարիներ շարունակ, Պ. Շահդիդանեանը գոհ է  
եղել նրանից և այնչափ, որ երբ պ. Սնգիրաբեանը մի քանի  
անգամ թողնում է իւր պաշտօնը, խնդրում է և համոզում  
նրան նորից լանձն առնել իւր գործերը Վերջս պէս, անցեալ  
տարուս լունուարին կառավարիչը հրաժարում է իւր պաշ-  
տօնից և պահանջում պ. Շահդիդանեանից իւր ստանալիքը  
մուրհակով.

Պ. Շահդիդանեանը զրդուում է և մի երեկով Բագուի  
ժողովարանի զահիճում մի խումբ մարզկանց ներկալութեամբ  
վիրաւորական խօսքեր է ասում նրան. Պ. Սնգիրաբեան դի-  
մում է դատարանին. Գործը հաշտարար դատարանից անց-  
նում է նահանգսկանը. Պ. Շահդիդանեանի դստեր փեսացց  
երդ. հաւատ. պ. Պապաջաննեանն, իբրև վկալ, թովլ է տալիս  
իրան հակառակորդի բացակալութեամբ մի քանի մեղադրանք-  
ներ բարդել պ. Սնգիրաբեանի վրաէ Գլխաւոր մեղադրանքն  
այն է վինում, թէ իբր պ. Սնգիրաբեանը պ. Շահդիդանեանի  
գործերը վարելիս իբրև կառավարիչ գործել է ինչ ինչ եղ-  
ծումներ:

Դատարանը պ. Շահդիդանեանին ենթարկում է 10 օրեալ  
բանտարկութեան. Բ. լց պ. Սնգիրաբեանը իւր պատիւը վի-  
րաւորուած է համարում պ. Պապաջաննեանի ցուցմունքով և  
բացատ. ութևն է պահանջում. Նա առաջարկում է պատուի  
դատ. Արշաք, երկար մամանակ սեւ ժում են և, վերջապէս  
պ. Մարկոս Դոլուխանի միջամառութեան չնորհիւ ստի-  
պուած են լինում ընդունել:

Պատուի դատարանի անդամներ հրաւիրում են թիվլիսի  
նախկին նահանգապետ Բըլով, Ռոգիլզի կառս վարիչ Ֆէզլւ